ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

23 հունվարի 2020թ.
թիվ 10

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝
պարոն Դ.Գևորգյանին

Ձեզ ենք ուղարկում Արագածոտնի մարզի Արագածոտն համայնքի 2020 թվականի հունվարի 16-ի ավագանու թիվ 1,2,3,4,5,6,7 որոշումները, համաձայն հավելվածի:

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Ա.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Արագածոտն համայնք

ՈՐՈՇՈՒՄ

16-ը հունվարի 2020թ. N 1

ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով Արագածոտն համայնքի ավագանին որոշեց հաստատել 2020թ.-ի հունվարի 16-ի նիստի օրակարգը:

Օրակարգ

1. Արագածոտն համայնքի ավագանու նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Արագածոտն համայնքի 2020թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին:
3. Համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը սահմանելու մասին:
4. Արագածոտն համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
5. Արագածոտն համայնքի տարեկան բյուջեն հաստատելու մասին:
6. Արագածոտն համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի նպատակային նշանակություն փոխելու վերաբերյալ:
7. Սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների սահմանված չափորոշիչների մասին:

Կողմ- 5 Դեմ- 0 Ձեռնպահ – 0

Լ.Ավետիքյան

Գ.Զարոյան

Լ.Կիրակոսյան

Ա.Մկրտչյան

Զ.Մելիքյան

Արագածոտն համայնքի ղեկավար Մ.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Արագածոտն համայնք

ՈՐՈՇՈՒՄ

16-ը հունվարի 2020թ. N 2

ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ և 14-րդ հոդվածների պահանջներով Արագածոտն համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել ՀՀ Արագածոտն մարզի Արագածոտն համայնքի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ- 5 Դեմ- 0 Ձեռնպահ – 0

Լ.Ավետիքյան

Գ.Զարոյան

Լ.Կիրակոսյան

Ա.Մկրտչյան

Զ.Մելիքյան

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ.Ղազարյան

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Արագածոտն
համայնքի ավագանու 2020թ.
հունվարի 16-ի N 2 որոշման

ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020թ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ.

բ) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ,

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

3. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 2500 դրամ.

բ. 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3500 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 2500 դրամ.

բ. 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3500 դրամ.

4. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 դրամ:

5.Համայնքի վարչական տարածքում աճուրդներ և մրցույթներ անցկացնելու համար մասնակցության գումար սահմանել 5000 դրամ:

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ. Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Արագածոտն համայնք

ՈՐՈՇՈՒՄ

16-ը հունվարի 2020թ. N 3

ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով Արագածոտն համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Արագածոտն համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը սահմանել 297270 /երկու հարյուր իննսունյոթ հազար երկու հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամ:

Կողմ- 5 Դեմ- 0 Ձեռնպահ – 0

Լ.Ավետիքյան

Գ.Զարոյան

Լ.Կիրակոսյան

Ա.Մկրտչյան

Զ.Մելիքյան

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ.Ղազարյան

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Արագածոտն
համայնքի ավագանու
2020 թ. հունվարի 16-ի N4 որոշման

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 11
Աշխատակազմի կառուցվածքը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ 8

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույքաչափ		Վճարվող գումարի չափը
Համայնքի ղեկավար	1	297270	297270	227898
Տեղակալ	1	146680	146680	111944
Համայնքային ծառայության պաշտոններ				
Աշխատակազմի քարտուղար 1.2-1	1	170228	170228	130075
Առաջատար մասնագետ 3.1-1	1	151346	151346	115536
Առաջատար մասնագետ 3.1-2	1	151346	151346	115536
Առաջատար մասնագետ 3.1-3	1	151346	151346	115536
Սպասարկող անձնակազմ				
Անասնաբուժ պայմանագրային	0.5	72752	36376	28010
Մշակույթի տան պահակ	0.25	176000	44000	31780
Կոմունալ ծառայող	0.5	148000	74000	55980
Հավաքարար	0.25	176000	44000	31780
Գեղմասվար	0.25	176000	44000	32880
Գրադարանավար	0.25	176000	44000	31780
ԸՆԴԱՄԵՆԸ	8		1354592	1028735

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Արագածոտն համայնք

ՈՐՈՇՈՒՄ

16-ը հունվարի 2020թ. N 5

ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020թ. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով Արագածոտն համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել Արագածոտն համայնքի 2020թ. բյուջեն՝ համաձայն կից հավելված 1-ով:

Կողմ- 5 Դեմ- 0 Ձեռնպահ – 0

Լ.Ավետիքյան

Գ.Զարոյան

Լ.Կիրակոսյան

Ա.Մկրտչյան

Զ.Մելիքյան

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Արագածոտն համայնք

ՈՐՈՇՈՒՄ

16-ը հունվարի 2020թ. N 6

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, /Քաղաքաշինության մասին/ ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 2011թ.-ի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշմամբ սահմանված պահանջերով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշման ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2019թ.-ի դեկտեմբերի 26-ի թիվ 122 դրական եզրակացությունը համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.ՀՀ Արագածոտն մարզի Արագածոտն համայնքի վարչական տարածքում գտնվող՝« ԲԱՐԻ ԱՐԵՎ» ՍՊԸ-ի սեփականության իրավունքով պատկանող 1.5 հա /կադաստրային ծածկագիր 02-017-0044-0040, 1.5հա կադաստրային ծածկագիր 02-017-0044-0042, 5.9հա կադաստրային ծածկագիր 02-017-0127-0030 և «ՎԵՆՏՈՒՍ ԷՆԵՐՋԻ»ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 3.54հա կադաստրային ծածկագիր 02-017-0140-0111 գյուղատնտեսական հողեր նպատակային նշանակության արոտավայր հողատեսքերը փոխել և դարձնել էներգետիկայի, տրանսպորտի, կապի , կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության էներգետիկայի հողեր, գործառնական նշանակության ՝ արևային , ֆոտովոլտային կայան կառուցելու նպատակով:

2.ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետի համաձայն առաջարկել `« ԲԱՐԻ ԱՐԵՎ» ՍՊԸ-ին և «ՎԵՆՏՈՒՍ ԷՆԵՐՋԻ»ՍՊԸ-ին եռամսյա ժամկետում համայնքային բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը:

3.Սույն որոշման 2-րդ կետով սահմանված ժամկետում և սահմանված արժեքները համայնքային բյուջե չվճարելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:

4. Համայնքի ղեկավարին իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործողություններ:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է պետական գրանցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ- 5 Դեմ- 0 Ձեռնպահ – 0

Լ.Ավետիքյան

Գ.Զարոյան

Լ.Կիրակոսյան

Ա.Մկրտչյան

Զ.Մելիքյան

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ.Ղազարյան